

*Շրջակա միջավայրի նախարարության  
«Հիդրոոդերոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՇԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2024*

---


*Մարտի երրորդ տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոոդերոլոգիայի բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերոլոգիայի կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան*

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Մարտի երրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայի սահմաններում մի փոքր դրական ու բացասական շեղումներով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են մարտի 30-ին և 31-ին. Տավուշում գրանցվել է +22...+25°C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +10...+12°C, նախալեռնային շրջաններում՝ +19...+21°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +23...+25°C, նախալեռնային շրջաններում՝ +16...+18°C, Շիրակում՝ +16...+19°C (Աշոցք՝ +8°C, Ամասիա՝ +9°C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +11...+15°C, նախալեռնային շրջաններում՝ +16...+18°C, Գեղարքունիքում՝ +10...+13°C, Լոռիում՝ +17...+20°C, Արմավիրում, Արարատում՝ +21...+23°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +10...+12°C, նախալեռներում՝ +16...+21°C:


Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են մարտի 27-ին և 28-ին. Տավուշում գրանցվել է -4...+1°C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -10...-12°C, նախալեռնային շրջաններում՝ 0...+2°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +1...+5°C, նախալեռնային շրջաններում՝ -1...-6°C, Շիրակում՝ -6...-10°C (Աշոցք՝ -16°C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ -8...-10°C, նախալեռնային շրջաններում՝ -1...-3°C, Գեղարքունիքում՝ -4...-9°C, Լոռիում՝ -3...-7°C, Արմավիրում, Արարատում՝ 0...-2°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -10...-13°C, նախալեռներում՝ -1...-5°C:

### Տասնօրյակային տեղումներ




Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը շիրակում կազմել է 20-56մմ (143-410%), Լոռիում՝ 31-46մմ (171-368%), Տավուշում՝ 35-39մմ (186-218%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 20-53մմ (92-260%), նախալեռներում՝ 21-24մմ (92-260%), Գեղարքունիքում՝ 5-39մմ (30-183%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 52-65մմ (181-222%), նախալեռներում՝ 39մմ (228%), Արմավիրում՝ 14-20մմ (128-157%), Արարատում՝ 8-9մմ (56-81%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 22մմ (66%), նախալեռներում՝ 16մմ (95%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 10-14մմ (56-88%), նախալեռներում՝ 13-15մմ (60-92%):

### Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են մարտի 11-13-ն ընկած ժամանակահատվածում. լեռնային շրջաններում՝ -8...-10°C, առանձին լեռնային շրջաններում՝ -16...-19°C, Արարատյան դաշտում, Վայոց ձորի նախալեռներում և Սյունիքի հովտային շրջաններում՝ -5...-7°C:



Մարտի 31-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունն Արագած բ/լ-ում կազմել է 181 սմ, Ամբերդում՝ 75սմ, Զերմուկում՝ 64սմ, Ապարան լճայինում 54սմ, Անանուն լճ՝ 47սմ, Հրազդանում, Սեյրնուկայում՝ 40-43սմ, Պուշկինի լճ-ում 30սմ, Ամասիայում 25սմ, Սևանում, Աշոցքում՝ 17-19սմ, Ֆանտանում 2սմ:

Արարադյան դաշտում, Արագածոտնի և Կոտայքի նախալեռներում, Լոռիում, Տավուշում և Սյունիքում ձյան ծածկը բացակայել է:

## Գյուղատնտեսական աշխատանքների կատարման պայմանները



Հանրապետության նախալեռնային շրջաններում կատարվել են կարտոֆիլի նախացանքային աշխատանքներ:

Տասնորյակում դիտված եղանակային պայմանները նպաստավոր են եղել դաշտային աշխատանքներ իրականացնելու համար:

### Աշնանացան ցորեն

Հովտային շրջաններում շարունակվել է աշնանացան ցորենի ծեղացողունի ներքին հանգույցների առաջացումը, նախալեռնային շրջաններում աշնանացանը գտնվել է ցողունակալման փուլում:

Բույսի բարձրությունը տասնորյակի վերջում հասել է 39սմ-ի, տասնորյակային աճը կազմել է 10-15սմ:

Մերձավանում աշնանացանի դաշտում բույսի աճի և զարգացման համար անհրաժեշտ հողի խոնավության պաշարները 0-20սմ շերտում կազմել է 44մմ, 0-30սմ՝ 73մմ:

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենի վեգետացիան վերսկսվել է:





### **Պղպարուներ, խաղող**

Արարադյան դաշտում և նրա նախալեռնային շրջաններում ավարտվել է ծիրանենու ծաղկումը, դեղձենու բողբոջները բացվել են, տեղ-տեղ առաջացել առաջին տերևները:

Հովտային շրջաններում դիպվել է խաղողի հյութաշարժ:

### **Խոտաբույսեր**

Հովտային շրջաններում շարունակվել է առվույտի ցողունի աճը:

Բույսի բարձրությունը տասնորյակի վերջում հասել է 22սմ-ի: Տասնորյակային աճը կազմել է 7-9սմ:

